ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-ՓԿ 12

ք. Երևան «08 » « 02 » 2013թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որպես առողջապահության բնագավառում պետական պատվեր տեղադրող լիազորված մարմին (այսուհետև Պատվիրատու), ի դեմս ՀՀԱՆաշխատակազմի ղեկավար՝Ս.Քրմոյանի մի կողմից, և «Լոռու մարզային ՓԿ » ՊՈԱԿ - ի դեմս տնօրեն Ա.Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է պայմանագրում նշված ժամկետում իրականացնել հիգիենիկ և հակահամաճարակայինփորձագիտական Ծառայությունները՝ համաձայն սույն պայմանագրի N1 հավելվածում նշված ծավալի, տեսակների և գնի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Վերահսկելու ՀՀ բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման ու հանրային առողջության բնագավառում բնակչության առողջության պահպանման նպատակով Կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը.

2.1.3 Առանց Ծառայությունների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունները չեն համապատասխանում սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայությունների կատարման ժամկետը և Ծառայությունները չեն կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.4 Չընդունել Ծառայությունների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար.

2.2.3 Կատարողին ցուցաբերել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն.

2.2.4 Յուրաքանչյուր ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը Կատարողին տրամադրել կանխավճար՝ տվյալ ամսվա համար նախատեսված ֆինանսական միջոցների չափով.

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 60 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունը և հանրային առողջության բնագավառում բնակչության առողջության պահպանումը փորձագիտական հետազոտությունների, շրջակա միջավայրի ազդակների լաբորատոր գործիքային հետազոտությունների, ուսումնասիրությունների, վարակիչ հիվանդությունների օջախներում հակահամաճարակային միջոցառումների կատարման միջոցով, ժամանակակից պահանջներին և հաստատված չափանիշներին ու ծավալին համապատասխան: :

2.4.2 Պետական պատվերի շրջանակներում մատուցել N1 Հավելվածում նշված ծառայությունները՝ « ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի դրույթներին գործող մեթոդական ցուցումներին և հրահանգներին համապատասխան.

2.4.3 Ապահովել պետական պատվերի շրջանակներում իրականացվող ծառայությունների հաշվառումը, գրանցումը և եռամսյակային հաշվետվությունների ներկայացնելն ըստ սահմանված կարգի.

2.4.4 Յուրաքանչյուր եռամսյակ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակում մինչև դեկտեմբերի 25-ը Պատվիրատուին ներկայացնել կատարված աշխատանքների ֆիզիկական և արժեքային կազմի, կառուցվածքի ու ծավալների վերաբերյալ հաշվետվություն:

2.4.5 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.6 Սույն պայմանագրի 2.1.4 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պատվիրատուն Ծառայությունների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.2 Կատարողի մատուցած ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

3.3 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների գինը նշված է սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող N1 Հավելվածում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները: Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Կատարողը չի համաձայնվում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը: : Ընդ որում շուկայական գին է համարվում պետության կարիքների համար նմանատիպ ծառայության ձեռք բերման փաստացի նվազագույն գինը:

3.4 Պատվիրատուն սույն պայմանագրի N1 Հավելվածում նշված գումարը/ները/ Կատարողին վճարում է հետևյալ կարգով՝

ա/ մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսական կտրվածքով, մինչև տվյալ ամսվա 10-րդ աշխատանքային օրը, որպես կանխավճար, որը մարվում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 10-ը: 2013 թվականի հունվար և փետրվար ամիսներին մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է կանխավճարի ձևով մինչև 2013 թվականի փետրվարի 25-ը: Ընդ որում յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի չափը ներկայացված է սույն պայմանագրի N2 Հավելվածում:

բ/ 2013 թվականի դեկտեմբեր ամսին մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը:

3.5 Մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցվելիք ծառայությունների դիմաց կանխավճարի ձևով կատարված վճարումների և փաստացի մատուցված՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ սահմանված, ծառայությունների մատուցման արդյունքների միջև դրական տարբերության դեպքում Պատվիրատուն գումարները հաշվանցում է 2013թ. դեկտեմբերին մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարվող գումարներից: Եթե հաշվանցվելիք գումարի չափը գերազանցում է 2013թ. դեկտեմբերին վճարվելիք գումարը, ապա Կատարողը պարտավորվում է հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ հաստատվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գումարները հետ փոխանցել Պատվիրատուին:

3.6 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.7 Սույն պայմանագրով նախատեսված գումարի շրջանակում դեկտեմբերի 20-ից հետո Կատարողի կողմից մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն վճարում է հաջորդ տարում նախատեսված միջոցների հաշվին, հանձնման ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

4.2 Պայմանագրի չկատարումը, ներառյալ սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 2.1.4 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու, ինչպես նաև 2.4.6 կետով նախատեսված ժամկետը խախտելու

յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.3 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայությունների արժեքի 0,05%-ի չափով: Սույն պայմանագրի 3.5 կետով նախատեսված դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ Պատվիրատուին հետ վերադարձման ենթակա գումարի 0,05 տոկոսի չափով:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարվող գումարներից:

4.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.4 և 3.5 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

4.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայության դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2013 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը սույն պայմանագրի որևէ կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ ա) պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, բ) եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով, ինչպես նաև պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման և Ծառայության շուկայական գների ավելի քան 20 տոկոսով փոփոխման դեպքերի, համաձայն ՀՀԿ 10.02.11թ. թիվ 168-Ն որոշման:

6.4 Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրային գնի արհեստական փոփոխման՝ համաձայն ՀՀԿ 10.02.11թ. թիվ 168-Ն որոշման 71-հոդվածի:

6.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1 և N2 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն		« Լոռու մարզային ՓԿ»
	ՊՈԱԿ	
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն		Սպասարկող
բանկ<<ՀՎՏԲ Հայաստանբանկ>		
Հ/Հ 900011105039		Հ/Հ 16036100267000
ՀՎՀՀ 02507171		ՀՎՀՀ 06931135
ՀՀԱՆաշխատակազմի ղեկավար՝Ս.Քրմոյան		Տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան
(ստորագրություն)		(ստորագրություն)

Հավելված 1
« 08 » « 02 » 2013թ. կնքված N ՓԿ 12 պայմանագրի

ՀՀ առողջապահության նախարարության և «Լոռու մարզային ՓԿ » ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում իրականացվող ծառայությունների տեսակները և ծավալները

« «Լոռու մարզային ՓԿ»-ի գործունեության ծավալը		Հազ.դրամ	170840,0
Աշխատանքի և ծառայության անվանումը		**Չափի միավորը**	**Գինը (դրամ)**
Հետազոտություններ			
Ըստ բնակչության թվի		1 բն.հաշ.	250
1	**Մանրէաբանական հետազոտություններ**		
1.1.	Խմելու ջուր, բաց ջրամբարների և լողավազանների ջուր (բացի աղիքային ախտածին մանրէներից), սննդային հումք և սննդամթերք, սննդի հետ շփվող արտադրանք, օծանելիքային, դիմահարդարման և հարդարման միջոցներ, դեղորայք և այլն	1 ցուցանիշ	1500
1.2.	Լվացուկ (այդ թվում՝ ախտահանման և մանրէազերծման որակի հսկողության վերաբերյալ)	1 հետազ.	500
1.3.	Ցող	1ցուցան.	2000
1.4.	Հող	1ցուցան.	1000
1.5.	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի (թարախ, մեզ, խորխ, պունկտատ, կրծքի կաթ և այլն) հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում (մենինգիտ, դիֆթերիա, կապույտ և հարկապույտ հազ), հետազոտություն ստաֆիլոկոկերի, ստրեպտոկոկերի, պնևմոկոկերի և այլ ախտածին և պայմանական ախտածին մանրէների վերաբերյալ	1 նմուշ	3000
1.6.	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների վերաբերյալ (հիվանդներ և կոնտակտավորներ,առողջացածներ), հակամանրէային պատրաստուկների նկատմամբ զգայնության որոշում	1 նմուշ	2000
1.7.	Ստաֆիլոկոկի (այդ թվում՝ կանխարգելիչ) ախտածին սնկերի և այլ մանրէների վերաբերյալ (1 հարուցչի վերաբերյալ) հետազոտություն (ինչպես նաև քանակական)	1 հետազ	800
1.8.	Դիսբակտերիոզի, էնտերոպաթոգեն, աղիքային ցուպիկի վերաբերյալ ախտորոշիչ հետազոտություններ, հեմոկուլտուրայի հետազոտություններ և արյան մանրէազերծության որոշում, հետազոտություններ լիստերիաների, կամպիլոբակտերիաների, իերսինիաների (նաև արտաքին միջավայրում) և աճեցման համար հատուկ պայմաններ ու սնուցող միջավայրեր պահանջող այլ ախտածին մանրէների վերաբերյալ, շճաբանական հետազոտություններ (տիֆ-	1 նմուշ	4000

	պարատիֆային և այլ վարակների՝ ներառյալ ՊՀԱՌ, ՈՒՀԱՌ և այլն), հետազոտություններ սննդային թունավորակների ժամանակ (1 վարակի վերաբերյալ)		
1.9.	Հետազոտություններ աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	1 հետազ.	1200
2	**Հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտություններ**		
2.1.	Հետազոտություններ խոլերայի (բաց ջրամբարների, գետերի ջրերի, խմելու ջրի, կղանքի, կեղտաջրերի) նկատմամբ	1 նմուշ	5000
2.2.	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների (բրուցելոզի, բծավոր տիֆի, տուլարեմիայի) նկատմամբ	1 նմուշ	3000
3	**Մակաբուծաբանական հետազոտություններ**		
3.1.	Շրջակա միջավայրի (մրգեր, բանջարեղեն, խմելու ջրի, բաց ջրամբարների ջրի, հողի) հետազոտություններ	1 նմուշ	2000
3.2.	Ախտորոշիչ, կանխարգելիչ մակաբուծաբանական հետազոտություններ հելմինթների և նախակենդանիների նկատմամբ	1 հետազ	900
3.3.	Շրջակա միջավայրի օբյեկտներից (առարկաներ, մակերեսներ) լվացուկների սանիտարամակաբուծաբանական հետազոտություններ, արտազատված հատվածների հետազոտությունն	1 նմուշ	500
4	**Միջատաբանական հետազոտություններ**		
4.1.	Բոնիֆիկացիոն աշխատանքներ՝ շինության և բաց ջրամբարների մշակում	1 քառ.մ.	25
5	**Խանիտարա-քիմիական հետազոտություններ**		
5.1.	Ջուր, հող, սննդային հումք և սննդամթերք, սննդային հավելումներ և ԿԱԱՀ-ներ, պատրաստի ճաշատեսակներ,պոլիմերային և սինթետիկ նյութեր, կենցաղային քիմիայի և գեղահարդարման միջոցներ, պարարտանյութեր, ախտահանիչ նյութերի և այլ ն		
5,1,1	Տոքսիկ տարրերի և ֆիզ. քիմիական հետազոտություններ	1 ցուցանիշ	1500
	Թունաքիմիկատներ, միկոտոքսիններ հակաբիոտիկներ և այլն	1 խումբ	3000
5,1,2	Օդի հետազոտություն	1 հետազ.	2000
6.	**Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանում**	1 օջախ	18000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011105039

ՀՎՀՀ 02507171

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ս.Քրմոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

« Լոռու մարզային ՓԿ» ՊՈԱԿ

Սպասարկող բանկ<<ՀՎՏԲ Հայաստանբանկ>>

Հ/Հ 16036100267000

ՀՎՀՀ 06931135

Տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան

(ստորագրություն)

Հավելված 2
«.0..» «.02....» 2013թ. կնքված N ՓԿ 12 պայմանագրի

«Լոռու մարզային ՓԿ» ՊՈԱԿ-ին 2013թ. տրամադրվելիք
գումարներն ըստ ամիսների

N	Ամիսը	Գումարը (հազար դրամ)
1	Փետրվար	19361.8
2	Մարտ	9681.0
3	Ապրիլ	14236.7
4	Մայիս	14236.7
5	Հունիս	14236.6
6	Հուլիս	17084.0
7	Օգոստոս	17084.0
8	Սեպտեմբեր	17084.0
9	Հոկտեմբեր	15945.1
10	Նոյեմբեր	15945.1
11	Դեկտեմբեր	15945.1
	ԸՆԴԱՄԵՆԸ	170840.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011105039

ՀՎՀՀ 02507171

ՀՀԱՆաշխատակազմի ղեկավար՝ Ս.Քրմոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

« Լոռու մարզային ՓԿ» ՊՈԱԿ

Սպասարկող բանկ<<ՀՎՏԲ Հայաստանբանկ>>

Հ/Հ 16036100267000

ՀՎՀՀ 06931135

Տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան

(ստորագրություն)